

The scientific innovation of the research.

An optimal model has been created to develop pragmatic competence, which contributes to the design and organization of the course of Business English.

The theoretical value of the research.

The research has been carried out against the background of the basic linguistic, linguodidactic and methodological theories of teaching Business English. This provided a possibility to carry out conceptual and pragmatic analysis of the culturally-marked vocabulary and reveal the content and functional characteristics of developing pragmatic competence. The results of our theoretical study have led us to modeling a Business English course and systematizing the principles of selection of professionally-oriented texts, pragmatic exercises and procedure of their application.

The practical value of the research.

A system of practical, pragmatic, communicative exercises and tests has been worked out. A new questionnaire has been made up to reveal and assess pragmatic needs of students. On the basis of the proposed model new special courses, high school textbooks, manuals and workbooks can be designed and created.

The approbation of the research.

The main results of the research have been fully discussed and approved at the session of the chair of Foreign Language Teaching Methodology ASPU after Kh. Abovyan. As a result of testing carried out at the Department of SEUA/Polytechnic/ data have been obtained about the effectiveness of the proposed model for training purposes, which were included in the development of methodological selection system, and used in Business English at different stages of learning. The research materials of teaching Business English have already been implemented into practice in technical universities.

On the topic of the thesis four scientific papers have been published.

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՎԱՉԱԳԱՆԻ

**ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ
ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

**Ժ.Գ.00.02- Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂԱՍԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր Ի.Կ. Կարապետյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բանասիրական գիտությունների դոկտոր Ս.Ք. Գասպարյան մանկավարժական գիտությունների թեկնածու Մ.Օ. Գյողակյան
Առաջատար կազմակերպություն՝	Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. նոյեմբերի 22-ին ժամը՝ 14⁰⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՅ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմնագիրն առաքված է 2013թ. հոկտեմբերի 21 -ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

HASMIK VACHAGAN HOVHANNISYAN

THE PROBLEM OF DEVELOPING PRAGMATIC COMPETENCE IN ECONOMICALLY - ORIENTED BUSINESS ENGLISH COURSE

Summary

This dissertation deals with the urgent problem of developing the pragmatic competence of students in Business English course.

The relevance of the research

The sublanguage of economics is taught in different universities of RA. Future economists meet their communication needs, especially at the conversational level, without which they can't overcome the difficulties associated with the studying of the sublanguage of economics.

In designing this course, it is necessary to determine the main areas of speech activities: public, personal, educational and professional. The development of pragmatic competence contributes to presenting all these areas on different levels. From the point of view of Business English the public and professional areas have much in common as the public area refers to everyday social contacts and links with mass media as far as the professional area is closely connected with the professional activities and relations of the individual. The relevance of this research is confirmed by the fact that the development of communicative competence is based on the process of developing discourse, pragmatic and professional competences.

The aim of the research is to reveal the content and functional characteristics of economically-oriented training in Business English and the creation of an effective model of developing pragmatic competence which underlies the selection of relevant texts, vocabulary and exercises.

The objectives of the research:

- Study methodological, pedagogical literature on the research.
- Specify the content and functional characteristics of the development of pragmatic competence and create an effective model for designing and organizing courses of Business English.
- Systematize the principles for selecting professionally-oriented texts, exercises in terms of pragmatic competence.
- Work out a methodological system functioning by appropriate procedures and technologies that will create prerequisites for the design and organization of the course.

The content of the research is reflected on the structure of the thesis, which consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and appendices.

прагматической компетенции и создать оптимальную модель по проектированию и организации курса делового английского языка.

- Систематизировать принципы отбора профессионально-ориентированных текстов и упражнений с точки зрения развития прагматической компетенции.
- Разработать методическую систему, функционирующую соответствующими процедурами и технологиями, которая создаст предпосылки проектирования и организации данного курса.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, 3 глав, заключения, библиографии и приложений.

Научная новизна исследования. Создана эффективная модель по развитию прагматической компетенции, которая способствует проектированию и организации данного курса.

Теоретическое значение.

Изучены основные лингводидактические, методические, лингвистические теории по обучению деловому английскому языку. Проведен концептуальный и прагматический анализ культурно-маркированной лексики. Выявлены содержательные и функциональные характеристики развития прагматической компетенции. Смоделирован курс делового английского языка и систематизированы принципы отбора профессионально-ориентированных текстов, прагматических упражнений и процедуры их применения.

Практическое значение исследования.

Разработана система практических, коммуникативных, прагматических упражнений и тестов, для обоснования которых разработаны опросники по выявлению прагматических потребностей студентов. На основе предложенной модели можно спроектировать и создать новые курсы, спецкурсы, вузовские учебники, учебные пособия и рабочие тетради.

Апробация результатов исследования.

Основные положения результатов исследования полностью обсуждались и были одобрены на заседаниях кафедр общей педагогики, английского языка и методики его преподавания в АГПУ. В результате проведенного тестирования на факультетах ГИУА /Политехник/ получены данные об особенностях применения предложенной модели в учебных целях, которые были учтены при разработке методической системы отбора и применения культурно-маркированной лексики, основных концептов английского языка на разных этапах обучения деловому английскому языку для студентов экономических специальностей в технических вузах. Материалы исследования внедрены в практику преподавания английского языка на экономических факультетах технических вузов.

По теме диссертации опубликованы четыре научные статьи.

Ատենախոսության արդիականությունը: Տնտեսագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման նպատակներն ու խնդիրները ճշգրտվում են՝ հաշվի առնելով բուհական կրթության բովանդակությունը, ապագա տնտեսագետների ճանաչողական, հեռանկարային, մասնագիտական պահանջունքները, աշխատաշուկայի իրական պահանջները, օտար լեզվի ուսուցման հայրենական և միջազգային ավանդույթները, մանկավարժական, լեզվաբանական և մեթոդական, ընդհանուր համագիտական իրողությունները:

Ամեն մի դասընթաց նախագծելիս և կազմակերպելիս կարևորվում են տվյալ ուսումնական հաստատության առանձնահատկությունները: ՀՀ բուհական համակարգում տնտեսագիտություն դասավանդվում է տարբեր բուհերում, և տնտեսագիտական ուղղվածության բոլոր ֆակուլտետներում գործարարական անգլերենն ուսումնասիրվում է ընդհանուր տնտեսագիտական ենթալեզվի կամ ճյուղային լեզվի շրջանակներում: Դա չի նշանակում, թե գործարարական անգլերենը տնտեսագիտական ենթալեզվի մի մասն է կազմում: Գործարարական անգլերենի ուսուցումն ունի շատ հարուստ ավանդույթներ, ուստի նրա նպատակներն ու խնդիրները, բովանդակային և գործառական բաղադրամասերի յուրացման տեսանկյունից ավելի ամբողջական են մշակված:

Առաջին լուրջ խնդիրը, որը ստիպված են լինում լուծել տվյալ դասընթացը նախագծողները, նրան հատկացվող ժամաքանակն է: Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում /մեքենաշինության ճյուղում/» մասնագիտության ուսանողները ուսումնասիրում են անգլերենի երկու ենթալեզու՝ տնտեսագիտություն և կառավարում, իսկ եթե հաշվի առնենք, որ նշված ենթալեզուները կոնկրետանում են մեքենաշինության ճյուղով, ապա ակնհայտ է երկուսից ավելի ենթալեզուների ուսումնասիրությունը:

Կարևոր է նաև հաշվի առնել այն, թե խոսքային գործունեությունը կոնկրետ որ ոլորտում է իրականացվում՝ հանրային, անձնական, կրթական, թե մասնագիտական: Հետաքրքիր է, որ գործարարական անգլերենի տեսանկյունից հանրային և մասնագիտական ոլորտները շատ հարցերում ունեն ընդհանուր եզրեր, քանի որ «հանրային ոլորտը վերաբերում է այն ամենին, ինչն առնչվում է ամենօրյա հասարակական շփումներին (գործարարական և վարչական մարմինների, հանրային ծառայությունների հետ, հանրային բնույթի մշակութային գործունեությանը, լրատվամիջոցների հետ կապին և այլն)», իսկ «մասնագիտական ոլորտն ընդգրկում է այն ամենն, ինչն առնչվում է անձի

մասնագիտական գործունեությանն ու հարաբերություններին»¹:

Ապագա տնտեսագետները չեն կարող առաջնային համարել լեզվի կատարյալ իմացությունը՝ որպես ուսումնառության հիմնական նպատակ, քանի որ անգամ ամենալավ մշակված մեթոդական համակարգով անհավանական է դրան հասնել:

ժամանակակից լեզվաբանության մեջ լայն կիրառություն ունեն Զ. Պիրսի նշանաբանական գաղափարները, հատկապես աչքի են ընկնում Ռ. Յակոբսոնի, Զ. Մորիսի աշխատանքները, սակայն պրագմատիզմն իր զարգացումն ապրեց հատկապես Կ. Պոպերի «օբյեկտիվ գիտելիքի էպիստեմոլոգիայում»²:

Հատկապես կարևորվում են գործարարական հաղորդակցման հիմնախնդիրներին նվիրված այն հետազոտությունները, որոնք բացահայտում են գործաբանական և հանրամշակութային իրազեկության այս կամ այն տեսակետները (Т.А.Ильина, Г.В.Колшанский)³: Գործարարական անգլերենի ուսուցմանն առնչվող խնդիրների շարքում հատկապես կարևորվում է տեղեկատվության արագ հաղորդման հիմնախնդիրը կառավարման և ղեկավարման տարբեր մակարդակներում (И. А. Кононенко)⁴:

Ատենախոսության մեջ կարևորվում են հասկացութային մոտեցմամբ իրականացված աշխատանքները, որոնցում խոսակցական լեզվակաղապարները դիտարկվում են տարբեր շրջանակների համատեքստում: Առաջին պլան են մղվում գործարարությանը վերաբերող հասկացությունների «փող» (И. А. Майоренко)⁵, «աշխատանք/ծուլություն» (Р.Х.Каримова)⁶, «հարստություն», «եկամուտ/ շահույթ» (Е.В.Клементьева) հետազոտությունները:

¹ Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, զնահատում: Ծրագրի ղեկավար՝ Ս. Ջոլյան, Թարգմ.՝ Ս. Կարախանյան և ուրիշ., խմբ.՝ Սուրեն Ջոլյան, Մելանյա Աստվածատրյան և ուրիշ., Երևան, Կորթ Գրատուն, 2005:

² Peirce Ch. Collected Papers, vols. 1-6, 1931; Hartshorne C. & P. Weiss, vols. 7-8, ed. Burks, Reilly, Francis E. Charles Peirce's Theory of Scientific Method. New York: Fordham Univ. Press, 1970; Morris Ch. The Pragmatic Movement in American Philosophy. NY: George Braziller, 1970; Поппер К. Логика и рост научного знания ДОСХ. Избр. работы / Пер. с англ. М.: Прогресс, 1983.

³ Колшанский Г.В. Теоретические проблемы билингвизма // Научно-методическая конференция по вопросам обучения иностранным языкам в высшей школе. Ленинград, 1967.

⁴ Кононенко И.А. Подготовка старшеклассников к деловому общению. Диссертация кандидата педагогических наук. Красноярск, 1995.

⁵ Майоренко И.А. Концепт "деньги" в языковой картине мира (на материале русской и английской фразеологии) // Язык. Дискурс. Текст. Ч. I, Межд. науч. конф., посв. юбилею В.П. Малащенко. Ростов-на-Дону, 2004.

⁶ Каримова Р.Х. Концепт "труд/лень" в паремиологии неродственных языков: На примере немецкого, английского, русского, башкирского и татарского языков. Диссертация кандидата филологических наук. Уфа, 2004.

ՕԳԱՆԵՅՅԱՆ ԱՏՄԻԿ ՎԱՇԱԳԱՆՈՎՆԱ

ПРОБЛЕМА РАЗВИТИЯ ПРАГМАТИЧЕСКОЙ КОМПЕТЕНЦИИ В ЭКОНОМИЧЕСКИ - ОРИЕНТИРОВАННОМ КУРСЕ ДЕЛОВОГО АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - "Методика преподавания и воспитания (английский язык)".

Защита диссертации состоится 22-ого ноября 2013 г. в 14:00 на заседании специализированного совета педагогики 065 ВАК по присуждению ученой степени при Ереванском государственном университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна 52^а, ЕГУ, корпус факультета армянской филологии, аудитория 203.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена актуальной проблеме развития прагматической компетенции в курсе делового английского языка.

Актуальность исследования.

В вузовской системе РА деловой английский язык преподается в разных вузах в рамках подязыка экономики. Будущие экономисты удовлетворяют свои коммуникативные потребности прежде всего на разговорном уровне, без которого они не могут преодолеть трудности, связанные с изучением подязыка экономики.

При проектировании данного курса уточняются основные сферы речевой деятельности: общественная, личная, образовательная и профессиональная. Развитие прагматической компетенции способствует ознакомлению с вышеуказанными сферами на языковом уровне, в результате чего практическое владение языком осуществляется не только на коммуникативном, но и на профессиональном уровне.

Актуальность данного исследования подтверждается еще и тем, что проблема развития прагматической компетенции рассматривается в широком плане как основа дискурсивной, коммуникативной и профессиональной компетенций.

Целью исследования является выявление особенностей обучения профессионально-ориентированному деловому английскому языку и создание оптимальной модели развития прагматической компетенции, которая лежит в основе отбора соответствующих текстов, лексики и упражнений.

Задачи исследования.

- Изучить методологическую, педагогическую, лингводидактическую и методическую литературу по теме исследования.
- Уточнить содержательные и функциональные характеристики развития

գործաբանական իրազեկության համապատասխան մակարդակի հասնելու ապագա գործարարները չեն կարող աշխատել հռետորական տեքստերի վրա, պատրաստել ելույթ, այն մասնատել, տարանջատել գլխավոր և երկրորդական մասերը:

9. Ուսանողների գործաբանական իրազեկության զարգացման կարևորագույն միջոց է գովազդային, հռետորական տեքստերի ընթերցումը, ունկնդրումը, թարգմանությունը և վերարտադրությունը: Կարևոր է ուսանողներին առաջարկել ժամանակակից բաղաբաղական գործիչների, դիվանագետների, տնտեսագետների, գործարարների, վերլուծաբանների ելույթները, հարցազրույցները:

10. Փոխներգործուն՝ խաղային, դերախաղային, նախագծային, ԽԻԿ մեթոդների համակարգի կիրառումը նպաստում է իրական լեզվական միջավայրի ստեղծմանը կամ վերարտադրմանը:

11. Շարունակաբար զարգացնելով օտարալեզու բառապաշարի ուսուցման ժամանակակից մեթոդները, սկզբունքները, հնարները, ընդհանրապես՝ ռազմավարությունը, բառապաշարի յուրացման ինքնուրույն աշխատելու ընթացակարգերը մղվում են առաջին պլան:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հովհաննիսյան Հ.Վ. Իրազեկման առանձնահատկությունները տնտեսագիտական կողմնորոշման գործարար անգլերենի դասընթացում, ՀՊՃՀ-ի /Պոլիտեխնիկ/ “Լրաբեր 76” գիտական և մեթոդական հոդվածների ժողովածու, Երևան, 2009, հատոր I, N 2, էջ 1106 -1110:
2. Հովհաննիսյան Հ.Վ., Կարապետյան Ի.Վ. Գործաբանական իրազեկության զարգացման նախադրյալները տնտեսագիտական կողմնորոշման գործարար անգլերենի դասընթացում, Հանրապետական գիտ. նստաշրջանի նյութեր, Պրակ. 1, Գյումրի, «Դպիր հրատարակչություն», 2009, էջ 177-180:
3. Հովհաննիսյան Հ.Վ. Նախագծային աշխատանքը գործարար անգլերենի դասընթացում // «Սանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, «Ձանգակ-97» հրատ., 2009, էջ 40-45:
4. Оганесян А.В. Проблема развития прагматической компетентности у студентов-экономистов с помощью просмотра художественных фильмов // “Колха 2009”, Материалы международной научной конференции. Кутаиси: изд. Хандзта, 2009, с.59-62.

Առանձնանում են թարգմանության գործաբանական տեսակետին մվիրված (А. Нойберт)⁷, գործաբանական իրազեկության (А.В.Оганесян)⁸, գործարարական խոսույթում դարձվածային միավորներին (В.А.Пономаренко)⁹ մվիրված աշխատանքները:

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման գործընթացում մեծ դեր են խաղացել մեթոդական տիպականացմանը մվիրված ՀՀ-ում իրականացված վերջին շրջանի, մասնավորապես մասնագիտական կողմնորոշման դասընթացներին վերաբերող հետազոտությունները (Ս.Պ.Ասատրյան, Ն.Ռ. Գասպարյան, Հ.Ա.Ճանճապանյան)¹⁰:

Գործաբանական տեսակետից կարևոր է հստակեցնել երկու հասկացություն՝ աշխատաշուկա և մրցակցություն: Հետաքրքիրն այն է, որ տնտեսագիտությունն այն մասնագիտություններից է, որն արդի փուլում մեծ պահանջարկ ունի, չնայած դեռևս վաղ է խոսել ՀՀ արտադրական հզորությունների վերականգնման մասին: Նշված պահանջարկի աճը բացատրվում է ոչ միայն վերականգնվող արտադրական ճյուղերով, ենթակառուցվածքներով, այլև արևմտյան կազմակերպությունների շարունակական ընդլայնմամբ և տարածմամբ:

Արտասահմանյան համատեղ ձեռնարկություններում աշխատելու համար պահանջվում է գործաբանական և հաղորդակցական իրազեկություն կատարողական մակարդակում:

Գործարարական անգլերենի ուսուցման ոլորտում գործաբանական հայեցակետի շեշտադրումը հիմք է ստեղծում գոյություն ունեցող մոտեցումները նոր մեթոդաբանական դիրքերից վերանայելու և գործարարական անգլերենի ուսուցման ավելի արդյունավետ համակարգ ստեղծելու համար: Դրանով է պայմանավորված սույն հետազոտության

⁷ Нойберт А. Прагматические аспекты перевода // Вопросы теории перевода в зарубежной лингвистике. Сб. статей. Москва, 1978.

⁸ Оганесян А.В. Проблема развития прагматической компетентности у студентов-экономистов с помощью просмотра художественных фильмов // “Колха 2009”, Материалы международной научной конференции. Кутаиси: изд. Хандзта, 2009.

⁹ Пономаренко В.А. Фразеологические единицы в деловом дискурсе (на материале английского и русского языков). Автореферат диссертации кандидата филологических наук. Краснодар, 2007.

¹⁰ Ասատրյան Ս. Պ. Անգլերեն պատմագիտական տերմինաբանության ընտրությունը և մեթոդական տիպականացումը որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման պայման (սեղմագիր թեկն. ատենախոսության), Երևան, 2006; Գասպարյան Ն. Ռ. Նախադասության անմիջական բաղադրիչները որպես ուսումնական նյութ և դրանց կիրառումն անգլերենի ուսուցման մեջ (գյուղատնտեսական տեքստերի հիման վրա) (թեկն. ատենախոսություն), Երևան, 2006; Ճանճապանյան Հ.Ա. Տնտեսագիտական տերմինաբանության ընտրության մեթոդական տիպականացման սկզբունքները (ոչ լեզվական բուհերում գերմաներենի ուսուցման ժամանակ) (թեկն.ատ.), Երևան, 2006:

արդիականությունը:

Չետազոտության նպատակն է բացահայտել տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի ուսուցման առանձնահատկությունները և ստեղծել ուսանողների գործաբանական իրազեկության զարգացման այնպիսի արդյունավետ կաղապար, որն ընկած է համապատասխան տեքստերի, բառապաշարի և վարժությունների ընտրության հիմքում:

Չետազոտության օբյեկտը մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման և ուսումնառության համակարգն է ՀՀ-ի բուհական համակարգում:

Չետազոտության առարկան գործաբանական իրազեկության զարգացման գործընթացն է տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի դասընթացում:

Չետազոտության վարկածը:

Եթե ստեղծվի ուսումնասիրվող գործարարական անգլերեն ենթալեզվի և լեզվի հաղորդակցական վարքագծի և բառապաշարի յուրացման տնտեսագետ ուսանողների գործաբանական իրազեկությունը զարգացնող կաղապար, ապա հնարավոր կլինի նախագծել և կազմակերպել տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի ուսուցման արդյունավետ պայմաններ, որ ուսուցման ավարտական փուլում միջին և լավագույն ուսանողները հասնեն գործնական լեզվի արդյունավետ տիրապետման մակարդակի:

Չետազոտության խնդիրներն են.

- Ուսումնասիրել մասնագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի ուսուցմանը և ուսումնառությանը վերաբերող մեթոդաբանական, գիտամանկավարժական, մեթոդական և լեզվադիդակտիկական գրականությունը:
- Հստակեցնել գործաբանական իրազեկության զարգացման բովանդակային և գործառական բնութագրերը և ստեղծել տնտեսագիտական կողմնորոշման դասընթացի նախագծման և կազմակերպման արդյունավետ կաղապար:
- Բացահայտել տնտեսագիտական, գործարարական անգլերեն ենթալեզուների առանձնահատկությունները և համակարգել մասնագիտական կողմնորոշման տեքստերի, լեզվանյութի և վարժությունների ընտրության սկզբունքները գործաբանական իրազեկության զարգացման տեսանկյունից:
- Մշակել համապատասխան ընթացակարգերով և տեխնոլոգիաներով գործող մեթոդական համակարգ, որը հիմք կդառնա համապատասխան դասընթացի նախագծման և կազմակերպման համար:

գործընթացում, այլև առօրյայում:

2. Գործաբանական իրազեկության զարգացումը նպաստում է ուսանողների մտալեզվաբանական իրազեկության զարգացմանը, որի հիմքում ընկած է վերգործաբանական գիտակցությունը:

3. Գործաբանական իրազեկության զարգացման դերը կարևորվում է գործարարական անգլերենի ուսուցման բոլոր փուլերում, քանի որ ուսումնասիրվող լեզվի բառապաշարի յուրացումը հնարավոր չէ առանց մայրենի և ուսումնասիրվող լեզուների և մշակույթների առանձնահատկությունները բացահայտելու:


4. Գործարարական-պաշտոնական ոճի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են ունենում հասարակական գործունեության տեսակը, հաղորդակցման լրացուցիչ խնդիրները, փաստաթղթային ժանրը, շփվողների հաղորդակցության բնույթը, խոսքի սերման ձևը, հաղորդակցվողների փոխգործունեության առանձնահատկությունները, իմաստափոխության, խոսքի նախնական պատրաստվածության, շփման արտալեզվական բաղադրիչի ակտիվության աստիճանները և բառային բաղադրիչի հետ դրանց փոխգործունեության բնույթը:

5. Գործարարական անգլերենի դարձվածքային կաղապարների ուսուցումը մեծ նշանակություն ունի գործաբանական իրազեկության զարգացման տեսանկյունից: Այդ առումով մեծ ուսուցողական նշանակություն ունեն գրավոր գործարարական խոսույթները կամ դրանց հատվածները:

6. Գործարարական անգլերեն ենթալեզվի բառապաշարի ընտրության սկզբունքները որոշարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն բառային, իմաստային զուգորդական, դարձվածային-իմաստային դաշտերը, այլև գործարարությանը վերաբերող գերհասկացույթները: Դրանք են «փող», «հարստություն», «եկամուտ/շահույթ», «աշխատանք», «հաջողություն/նվաճում» և այլ գերհասկացույթները:

7. Գործարարության ոլորտին վերաբերող անգլերեն լեզվում ընդունված գերհասկացույթները կիրառվում են ոչ միայն գործարարական, այլև առօրյա-խոսակցական ոճերում: Գործաբանական բնույթի քերականական և բառային փոխներթափանցումը հնարավոր է հաղթահարել, երբ ուսանողները ծանոթանում են և՛ իրենց, և՛ լեզվակիրների ազգամշակութային նշույթավորում ունեցող կարծրատիպերին:

8. Գործաբանական իրազեկության զարգացման տեսանկյունից կարևորվում են հատկապես գործարարական տեքստի կամ խոսույթի հետևյալ հատկանիշները՝ մասնակիցները, ժամանակացույցը, նպատակները, արժեքները, առանցքային գերհասկացույթները, ռազմավարությունները, ժանրերը, ոճը, նախադեպային տեքստերը և խոսութային բանաձևերը: Առանց



Նախագծային մեթոդի արդյունավետությունը բացահայտող գիտափորձն անցկացվում է միջին և բարձր առաջադիմություն ցույց տվող ուսանողների հետ: Կարևոր եզրահանգում է այն, որ նախագծային մեթոդով աշխատող ուսանողների մեջ զարգանում է ստեղծագործական և հետազոտական ինքնուրույնությունը: Ընդ որում՝ շեշտվում է սույն մեթոդի ներառական բնույթը, քանի որ ուսանողներն իրենց հաղորդակցական ունակությունները դրսևորելու և զարգացնելու համար պիտի ունենան ոչ միայն լավ գիտելիքներ գործարարական անգլերենից, այլև տնտեսագիտությունից:

Կատարված փորձաքննության արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է ընձեռում անելու հետևյալ **եզրակացությունները**.

1. Գործարարական անգլերենը հստակորեն արտացոլում է խոսակցական և նորմատիվ անգլերենի զարգացման միտումները: Հատկանշական է այն, որ տնտեսագետ-ուսանողները հիմնականում չեն հաղթահարում միջնակության և ներմշակության բնույթի դժվարությունները, քանի որ նրանց մոտ թույլ է զարգացած գործաբանական իրազեկությունը ոչ միայն ուսուցման

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են հայրենական և արտերկրի փիլիսոփաների, մեթոդիստների, լեզվաբանների, հոգեբանների և լեզվահոգեբանների հետևյալ հայեցակարգերն ու հետազոտական մեթոդները:

Մ.Գ. Աստվածատրյանի, Բ.Մ. Եսաջանյանի օտար լեզվի բազմալեզվյան և բազմամշակութային ուսուցման, Վ.Ս. Վյաչչենկոյի, Ն.Կ. Ֆարադայի բառային փոխներթափանցման, Թ. Հաչինտոնի օտար լեզվի մասնագիտական կողմնորոշման ուսուցման, սովորողների մասնագիտական, հեռանկարային, ճանաչողական պահանջմունքների վերլուծության, Ի. Ա. Մայորենկոյի, Ռ. Վ. Կլեմենտի, Ռ. Ս. Կարիմովի հասկացությունները, Ե. Ա. Կլիմովի մասնագիտական մտածելակերպի, Յու. Մ. Լոթմանի մշակույթների տիպաբանության, Չ. Ս. Պիրսի, Չ. Մորիսի նշանաբանական, Ի. Ա. Ստերնինի հաղորդակցական վարքագծի կադապարման, Ա. Նոյբերտի թարգմանության գործաբանական հայեցակերպի, Վ. Ա. Պոնոմարենկոյի գործարարական խոսույթի վերլուծության, Կ. Բարդովի-Չարլիկի գործաբանական իրազեկության մոտեցումները և հայեցակարգերը:

Հետազոտության մեթոդները.

- գործաբանական բնույթի և ուղղվածության, գովազդային, հռետորական, գործարարական տեքստերի լեզվաոճական վերլուծություն,
- լեզվական, հաղորդակցական, հանրամշակութային, գործաբանական իրազեկության ստուգման աստիճանի բացահայտման թեստավորում,
- տարբեր մեթոդական մոտեցումների վերլուծություն, համեմատություն, և հակադրում,
- նախնական վարկածի և առաջարկվող մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման կադապարի փորձարարական ստուգում և հիմնավորում:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ մշակվել է գործաբանական իրազեկության զարգացման արդյունավետ կադապար, որը նպաստում է տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի դասընթացի նախագծմանը և կազմակերպմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Գործարարական անգլերենի գործաբանական հայեցակերպի տեսանկյունից ուսումնասիրվել են մասնագիտական, մասնագիտական կողմնորոշման, գործարարական անգլերենի ուսուցմանը և ուսումնառությանը վերաբերող հիմնական տեսությունները, իրականացվել է մշակութային նշույթավորում ունեցող բառապաշարի հայեցակարգային, գերհասկացութային և գործաբանական վերլուծություն:

Բացահայտվել է գործաբանական իրազեկության զարգացման բովանդակային և գործառական բնութագրերը տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի դասընթացի նախագծման և կազմակերպման

տեսանկյունից, որը հիմք է տվել կաղապարել ուսումնասիրվող դասընթացը: Արդյունքում հստակեցվել և համակարգվել են մասնագիտական կողմնորոշման տեքստերի, լեզվանյութի, գործաբանական ուղղվածության վարժությունների ընտրության սկզբունքները և նրանց կիրառման ընթացակարգերը:

Չետագոտության գործնական նշանակությունը: Մշակվել են գործնական, հաղորդակցական, գործաբանական ուղղվածության վարժությունների համակարգ և թեստեր, որոնց հիմնավորման համար մշակվել են ուսանողների գործաբանական պահանջները բացահայտող հարցաշարեր: Տնտեսագիտական կողմնորոշման դասընթացի նախագծման և ստեղծման առաջարկվող կաղապարի հիման վրա կարելի է կազմակերպել նոր դասընթացներ, ստեղծել բուհական դասագրքեր, ձեռնարկներ և ուղեցույցներ:

Չետագոտության հիմնական փուլերը.

Առաջին փուլ (2007-2008): Մանկավարժական, հոգեբանական, լեզվաբանական, մեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծում: Չետագոտության խնդիրների հստակեցում և կոնկրետացում:

Երկրորդ փուլ (2008-2009): Չետագոտության վարկածն հաստատող գիտափորձի անցկացում, արդյունքների վերլուծում ու ամփոփում: Ստուգողական գիտափորձի փաստագրական բազայի նախնական մշակում: Չետագոտության փորձարարական հիմքի նախապատրաստում:

Երրորդ փուլ (2009-2010): Փորձարարական գիտափորձի անցկացում: Չետագոտության արդյունքների ամփոփում, ստացված արդյունքների վերլուծում և ընդհանրացում, արդյունքների շարադրում:

Չետագոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում է կիրառված հիմնադրույթներով և տեսականորեն ու գործնականորեն հիմնավորվում է մեթոդների համալիր գործածությամբ, հետազոտության օբյեկտի, առարկայի դիֆակտիկական, մեթոդական առանձնահատկություններին համապատասխան և հետազոտության արդյունքում ստացված տվյալների հուսալիությամբ:

Չետագոտության արդյունքների փորձաքննությունը:

Չետագոտության արդյունքներն ամբողջությամբ քննարկվել ու հավանության են արժանացել Խ. Աբովյանի անվան ՉՊՄՀ անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի և ընդհանուր մանկավարժության ամբիոնների համատեղ նիստում, ինչպես նաև Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղում:

Չետագոտության արդյունքների ներդրումը: Չետագոտության արդյունքները ներդրվել են Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրու և Վանաձորի մասնաճյուղերում: Ատենախոսության

How is it possible to overcome this crisis?				
1. Obama and his cabinet can do it	15	18	16	15
2. China & Russia, European countries can support the USA	19	17	15	14
3. It is not possible	14	5	13	16
4. We need time to do it	31	29	23	24
5. Your variant	21	31	33	31
Can this recession have negative influence on Armenia?				
1. Yes, but indirectly	25	23	16	18
2. No, it can't	13	7	14	12
3. Yes, directly	23	17	20	26
4. It influences all the countries	9	16	28	35
5. Your variant	30	37	22	9
Iraq war and its influence on the economic crisis in the USA.				
1. The main reason is the collapse of American bank system	25	23	24	23
2. Low rate mortgages	20	17	25	20
3. It is one of the reasons	16	17	18	20
4. It is the main reason	20	13	23	22
5. Your variant	19	30	10	15

Press Project–ի ժամանակ ուսանողները կազմակերպում են «Մամուլի ժամ», որտեղ առաջին պլան է մղվում ՀՀ տնտեսական վիճակը, այսինքն՝ այն, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ համաշխարհային ճգնաժամը ՀՀ տնտեսության վրա: Վերջում «փորձագետները», այսինքն՝ նախագծին ավելի ակտիվ մասնակցություն ունեցող ուսանողները հողավածի կամ հաշվետվության ձևով ներկայացնում են «Մամուլի ժամ»-ի արդյունքները:

Ստուգողական և փորձարարական խմբերում ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է տնտեսագետ ուսանողների խոսքաստեղծ գործունեությանը, քանի որ փորձարարական խմբում ուսանողների գերակշռող մասը նախընտրում են Your variant տարբերակը: Առանց քննադատական մտածողության համապատասխան մակարդակի, առանց պահանջվող բառապաշարի իմացության հնարավոր չէր լինի ընտրել այդ տարբերակը: Այդ տարբերակն ընտրած ուսանողները սկսում են հանդես գալ որպես նախաձեռնող կողմ՝ ակտիվորեն մասնակցելով համապատասխան քննարկումներին: Ուսանողների 35%-ը ցույց տվեց գրավոր խոսույթ ստեղծելու համապատասխան ունակություններ, օգտագործելով արդեն յուրացրած համապատասխան բառապաշարը:

Փորձարարական եվ ստուգողական խմբերի ցույց տված արդյունքների (%-ով) ամփոփիչ աղյուսակ

Առաջարկվող հարցերը	Փորձարարական խումբ		Ստուգողական խումբ	
	N=45		N = 49	
	Մինչև փորձը	Փորձից հետո	Մինչև փորձը	Փորձից հետո
What factors are more important to understand the dynamics of economic recession in the USA?				
1. Psychological	22	11	16	19
2. Bush & his cabinet	28	19	27	24
3. Historical	14	10	15	18
4. Economical	20	25	24	29
5. Your variant	16	35	18	10

հիմնադրույթներն արտացոլված են չորս հողավածներում (տես՝ անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

- Տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի ուսուցման կարևորագույն պայման է գործաբանական իրազեկության զարգացումը, որն էլ իր հերթին ենթադրում է ոչ միայն տնտեսագիտական, գործարարական, խոսակցական, նորմատիվ անգլերենի ուսումնառություն, այլև գործարար ոլորտին բնորոշ հաղորդակցական վարքագծի հետ ծանոթացում և յուրացում:
- Գործաբանական իրազեկությունը նախապայման է ոչ միայն միջնակութային, այլև ներմշակութային հաղորդակցություն իրականացնելու համար: Գործարարական անգլերենի ուսուցումը միտում ունի շարունակական գործաբանացման:
- Գործարարական տեքստերն ուսուցողական նպատակներով ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տեքստերի կազմավորման հիմնական գործաբանական գործոնները: Այդ առումով կարևորվում են ոչ միայն գործարարական տեքստերի ժանրային, ոճաբանական, շարահյուսական առանձնահատկությունները, այլև գործարարության կամ բիզնեսի հասկացութային կամ կոնցեպտուալ ոլորտը: Շատ մեծ նշանակություն ունեն գործարարական տեքստերի ազգամշակութային յուրահատկությունները, մասնավորապես ազգային նշույթավորում ունեցող բառապաշարի առանձնահատկությունները:
- Նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է միջնակութային հաղորդակցական իրազեկության զարգացմանը, ընդ որում, այստեղ մենք գործ ունենք ոչ միայն հենքային գիտելիքների, այլև գործարարական անգլերենի զարգացման հետ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը 142 համակարգչային էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, որոշված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, մեթոդաբանական հիմքը և մեթոդները, ներկայացված են հետազոտության համակազմը, փուլերը, գիտական

նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, տրված են պաշտպանության ներկայացված հիմնադրույթները, հավաստիությունը և հիմնավորվածությունը, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **«Տնտեսագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման առանձնահատկություններն արդի փուլում»** խորագրով առաջին գլուխը կազմված է երկու ենթազխից:

Առաջին ենթազխում` **«Իրազեկային մոտեցման առանձնահատկությունները տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի դասընթացում»**, ներկայացված է իրազեկային մոտեցման երեք տեսակ` մասնագիտական, գործաբանական և հաղորդակցական:

Նշվում է, որ գործարարական անգլերենը կարող է տնտեսագիտական անգլերենի մաս կազմել, մյուս կողմից` այն ներկայանում է որպես առաձին ենթալեզու: Ընդհանուր գծերով համեմատվում են հանրալեզվաբանական, գործաբանական, լեզվական-հաղորդակցական իրազեկության բովանդակային բնութագրերը:

Հստակորեն տարբերակվում են իրազեկության բազային և ավարտական մակարդակներն, առ այն, որ տնտեսագետները, մտնելով գործարարական կապերի մեջ, բազային մակարդակում պետք է յուրացնեն անգլերենն` որպես հաղորդակցման միջոց, իսկ ավարտական մակարդակում ուսանողները լուծում են գործնական, գործաբանական ուղղվածության խնդիրներ: Նրանք ձեռք են բերում պահանջվող տեղեկատվությունն անգլերեն լեզվով գտնելու և կիրառելու ունակություն:

Վերլուծվել են հաղորդակցական իրազեկության լեզվաբանական, հանրալեզվաբանական, գործաբանական բաղադրիչները: Ապացուցվում է կոնկրետ օրինակներով, որ այդ կարողությունները չեն զարգանում մեկը մյուսից անկախ կամ մեկը մյուսի հաշվին:

Ինչ վերաբերում է գործաբանական իրազեկությանը, ապա այն ենթադրում է հաղորդակցական վարքագծի համապարփակ տիրապետում, որը հանդես է գալիս որպես տվյալ լեզվակիր ժողովրդի հաղորդակցական նորմերի և ավանդույթների ամբողջություն` ներկայացնելով այս կամ այն լեզվամշակութային հանրությունը:

Երկրորդ ենթազխում` **«Գործաբանական իրազեկության զարգացման նախադրյալները տնտեսագիտական կողմնորոշման գործարարական անգլերենի դասընթացում»**, կարևորվում է գործաբանական իրազեկության դերն անգլերենի բառապաշարի յուրացման գործընթացում: Կարևոր դրույթ է այն, որ գործաբանական իրազեկությունը ոչ միայն միջմշակութային, այլև ներմշակութային հաղորդակցություն իրականացնելու նախապայման է:

են առնվել ոչ միայն բառային, իմաստային-գույզողական, դարձվածային-իմաստային դաշտերը, այլև գործարարությանը վերաբերող հասկացությունները: Դրանք են «փող», «հարստություն», «եկամուտ/շահույթ», «աշխատանք», «հաջողություն/նվաճում» և այլն:

Երրորդ ենթազխում` **«Գործարարական կողմնորոշման անգլերենի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության գիտափորձարարական հիմնավորումը»**, համապատասխան գիտամեթոդական, մանկավարժական գրականության վերլուծության շնորհիվ ներկայացվել է, թե ինչպես է անգլերենը դառնում հաղորդակցական միջոց ուսանողների համար:

Նշվում է, որ նախագծային մեթոդի կիրառումն իրական լեզվական միջավայրի ստեղծման կամ վերարտադրման ամենարդյունավետ եղանակներից է:

ՀԳՃՀ-ի Պ. Մելքոնյանի անվան Վանաձորի մասնաճյուղի մի քանի ֆակուլտետներում անցկացվել են անգլերենի նախագծային դասեր:

Առաջին փուլում ուսանողների հետ մենք որոշել ենք աշխատանքի ռազմավարությունը: Ընտրվել է աշխատանքի չորս եղանակ մի դասի ժամանակ, կիրառել ենք հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլը, ինչպես նաև «աճուրդը բորսայում»: Նախագծի մեջ ներգրավել ենք երկու ուսանողական խումբ` «A» և «B»: Մի խումբը ներկայացնում է ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամը, մյուս խումբը` նրա ազդեցությունը համաշխարհային և Հայաստանի տնտեսությունների վրա:

Երկրորդ փուլում նախագծային աշխատանքը ենթադրում է գաղափարի ձևավորում և իրականացում: Կարևոր է նշել, որ ամեն մի խմբի ներսում աշխատում են ենթանախագծային խմբեր` հեռուստատեսային նախագիծ, համացանցային նախագիծ:

Նշվում է, որ առաջին նախագիծը նվիրված է ԱՄՆ-ի տնտեսական ճգնաժամին, իսկ երկրորդ նախագիծը` համաշխարհային և Հայաստանի տնտեսական ճգնաժամին: Հայտնի CNN կամ BBC հեռուստատեսային ալիքները, հաղորդավարները, փորձագետները, վերլուծաբաններն անցկացնում են հարցախույզ, հարցազրույց և պատասխանում են հեռուստադիտողների հարցերին:

Համացանցային նախագծի անցկացմանը հատկացվում է երկու ժամ: Առաջին A խումբը կազմակերպում է համացանցային հարցախույզ: Հարցման ենթարկվածները առաջարկում են ճգնաժամից դուրս գալու իրենց տարբերակները: B խումբն անում է նույնը, սակայն նրանց նախագիծը վերաբերում է գլոբալ ճգնաժամին և նրա ազդեցությանը Հայաստանի տնտեսության զարգացման վրա:

Կարևորվում է այն, որ գերտեքստը նոր համակարգչային (տեղեկատվական) տեխնոլոգիա է, որը դիտարկվում է իր տեղեկատվական առանձնահատկությունների տեսանկյունից:

Գործարարական անգլերենի ուսուցման գործընթացում կարևորվում են անգլիալեզու պայմանագրերը, որոնք ձևակերպվում են որպես պատվիրված խոսքային հիպերակտեր:

Կարևորվում են ոչ միայն գործարարական տեքստերի ժանրային, ոճաբանական, շարահյուսական առանձնահատկությունները, այլև գործարարության կամ բիզնեսի /գեր/ հասկացության կամ հիմնահարցային ոլորտը: Այդ առումով նշվում է, որ շատ մեծ նշանակություն ունի գործարարական տեքստերի ազգամշակութային յուրահատկությունները, մասնավորապես՝ ազգային նշույթավորում ունեցող բառապաշարի առանձնահատկությունները:

Երկրորդ ենթապլանում՝ **«Տնտեսագիտական կողմնորոշման բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդիրը գործարարական անգլերենի դասընթացում»**, գործաբանական մոտեցման տեսանկյունից դիտարկվել են գործարարական անգլերենի բառապաշարի ընտրության սկզբունքները: Առաջ են մղվել խոսքասերման և գործաբանական մեխանիզմները:

Մշակված է գործաբանական իրադրությունների տիպաբանությունը: Հաշվի են առնվել այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են տեղը, ժամանակը, նպատակը, խոսողի դիտավորությունը, նրա սոցիալական կարգավիճակը, մասնագիտությունը, սեռը, տարիքը:

Իրականացվում է «գործարարական տեքստ» և «գործարարական խոսույթ» հասկացությունների համեմատական վերլուծություն և վերջինս առաջադրվում է անգլերենի ուսուցման հիմնական միավոր, որը ներկայանալով պաշտոնական-վավերագրական և առօրյա-գործարարական ձևաչափերով, առանձնանում է նախ և առաջ նոր բառապաշարով, նորակազմություններով և նորաբանություններով, դիպվածային բառերով և ներգոր բառապաշարով:

Անգլերենի գործարարական խոսույթում առանձնացվում են դարձվածքները, որոնք միավորվում են չորս դարձվածաբանական-իմաստային դաշտերում: Առաջին դարձվածաբանական-իմաստային դաշտը միավորվում է «գործարարություն և վերահսկողություն» հասկացություններով: Երկրորդ դարձվածաբանական-իմաստային դաշտը ձևավորվում է «փողային կամ դրամային» ընդհանուր հասկացությամբ: Երրորդը ներկայացնում է «առք և վաճառք» հասկացությունը, իսկ չորրորդը՝ «տնտեսական և արտադրական» դարձվածաբանական-իմաստային դաշտով:

Հայեցակարգային նշանակություն ունի այն, որ գործարարական անգլերեն ենթալեզվի բառապաշարի ընտրության սկզբունքները որոշարկելիս, հաշվի

Հաղորդակցական գիտելիքների հարստացման տեսանկյունից կարևորվում է գործարար կյանքին բնորոշ փոխհարաբերությունների յուրացման հիմնախնդիրը: Այսինքն՝ կոնկրետանում է «հաղորդակցական վարքագիծ» հասկացությունն այն առումով, որ տնտեսագետներն իրենց գործարար գործունեության ոլորտում ունեն յուրահատուկ հաղորդակցական վարքագիծ՝ համապատասխան խոսքային և ոչ խոսքային կադապարներով: Այս տեսանկյունից այլ հնչեղություն է ստանում մշակութային բացերի, իրույթների, «անհամարժեք իրողությունների» յուրացման հարցը, քանի որ շեշտը պիտի դրվի նախ և առաջ տնտեսագիտական, գործարար կյանքին բնորոշ բացերի ուսումնասիրության վրա՝ նրանց թարգմանության, բանավոր և գրավոր խոսքի կիրառման տեսանկյունից:

Ասվածի լույսի ներքո մեծ նշանակություն է ստանում տնտեսագիտական, գիտական գրականության հետևողական ուսումնասիրությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Տնտեսագիտական վերլուծական հոդվածների ընթերցումն ընդհանուր պատկերացում է տալիս տվյալ ենթալեզվի, նրա տերմինաբանության մասին: Շատ դեպքերում միայն զուգահեռ՝ երկու լեզվով ընթերցանությունն օգնում է ուսանողներին՝ թարգմանելու շարժուն արտահայտություններ, որոնց մեծ մասը, լինելով նորաբանություն, դժվար է գտնել համապատասխան բառարաններում:

Համապատասխան վերլուծությամբ հիմնավորվում է մամուլի և այլ լրատվամիջոցներով ուսանողների ինքնուրույն, արտալսարանային աշխատանքի կազմակերպման անհարժեշտությունը:

Գործաբանական մոտեցման տեսանկյունից կարևորվում է խոսակցական, գրական-նորմատիվ, գործարար լեզուների հարաբերակցության հարցը: Ակնհայտ է, որ լեզվի նշված ոլորտները փոխկապակցված են և հնարավոր չէ համապարփակ պատկերացում կազմել գործարարական անգլերենի մասին, յուրացնել այն՝ առանց խոսակցական և նորմատիվ-գրական լեզուներն ուսումնասիրելու:

Նշվում է, որ գործարարական անգլերենը հստակորեն արտացոլում է խոսակցական և նորմատիվ անգլերենի զարգացման միտումները:

Գործառական-գործաբանական մոտեցման առանձնահատկություններից մեկի բացահայտումը հնարավորություն է ընձեռում բացահայտել խոսողի և նշանի միջև հարաբերակցությունը, ուսումնասիրելու նշանների գործառությունը խոսքային ակտի մեջ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Գործարարական հաղորդակցման մշակույթի ձևավորման առանձնահատկությունները»**, խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթալեզվից:

Առաջին ենթազխում քննարկվել են գործարարական–պաշտոնական ոճի ժանրային առանձնահատկությունները՝ որպես հաղորդակցման մշակույթի ձևավորման կարևոր բաղադրիչ: Անդրադարձ է կատարվել հաղորդակցման երեք տարատեսակներին՝ գործարարական, ներգործական և հուզական:

Սահմանվում է «Գործարարական հաղորդակցում» հասկացությունն, առ այն, որ դա միջանձնային ներգործություն է՝ ուղղված սուբյեկտների ընդհանրության ստեղծմանը: Բացահայտվում է հաղորդակցման մշակութային հայեցակերպը խոսքի մշակույթի համատեքստում:

Աճծի հաղորդակցական մշակույթը բնորոշվում է որպես հասարակության կողմից ընդունված գիտելիքների, արժեքների, նորմերի և վարքագծի օրինակների համակարգ, ինչպես նաև դրանց բնական և կամավոր իրագործում՝ գործարար և հուզական հաղորդակցման ժամանակ:

Ներկայացվում են գործարարական հաղորդակցման օբյեկտիվ պայմանները՝ իրադրությունը, ժամանակը, իրազեկությունը, գործընկերների դիրքը, ներքին խթանները և սուբյեկտիվ պայմանները՝ գործընկերների սեռը, տարիքը, սոցիալական վիճակը, անհատական առանձնահատկությունները, հոգեբանական և ֆիզիկական վիճակը: Այնուհետև ներկայացվում են գործարարական հաղորդակցման միջոցները՝ բառային, դիմախաղային, մնջախաղային և մետալեզվական, ընդհանուր առմամբ հանրալեզվական միջոցները:

Գործարարական խոսքի բանավոր և գրավոր ձևերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բանավոր խոսքի համար կարևոր են արտասանությունը, շեշտադրությունը, խոսքի պատկերավորման միջոցները և խոսողի հռետորական առանձնահատկությունները: Գործարարական անգլերենի ուսուցման համար կարևորվում են մասնագիտական տերմինները, հասկացությունները և տրամաբանական դատողությունները: Գործարարական–պաշտոնական ոճի շրջանակներում առանձնացվում են հետևյալ ժանրերը՝ նամակագրության, օրենսդրական–կարգորոշիչ, տեղեկատվության և հանրագումարային փաստաթղթերը:

Երկրորդ ենթազխում՝ «**Անգլերենի գործարարական ոճի հաղորդակցական հայեցակերպը**», քննարկման են ենթարկվել ոճաբանական կիրարկման, ոճաբանական առաջադրանքի և դրա կայացման միջոցների, հասցեատիրոջ և հասցեագրողի փոխհարաբերությունների հիմնախնդիրները:

Գործարարական անգլերենի ուսուցման տեսանկյունից կարևորվում է գործարարական բառապաշարի ուսուցման ընթացակարգերի մշակումը, միտված խոսակցական և գործարարական–պաշտոնական ոճի լեզվակաղապարների յուրացմանը: Նշվում է, որ ուսուցման բոլոր փուլերում խոսակցական լեզվակաղապարներն ուսուցանվում են որպես գործարարական ենթալեզվի յուրացման հիմնական պայման և ուսուցման ավարտական փուլում շեշտը

դրվում է կոնկրետ գործարարական կողմնորոշման բառապաշարի և տերմինաբանության յուրացման վրա: Հաշվի են առնվում այն հիմնական գերհասկացությունները, որոնք հիմք ընդունելով՝ կարելի է ընտրել համապատասխան բառապաշարը:

Երրորդ ենթազխում՝ «**Գործարարական–պաշտոնական ոճի գործաբանական հայեցակերպը**», ներկայացված են գործառական ոճերի դասակարգումները: Ելնելով ժամանակակից ոճագիտության դասակարգումներից՝ առանձնացրել ենք պաշտոնական ոճը իրադրային ոճի շրջանակներում՝ որպես տեղեկատվական ոճի տարատեսակ:

Բացահայտվում են գործարարական–պաշտոնական ոճի ձևավորման գործոնները և ներկայացվում են գործառական ոճի ամբողջականության պահպանման, համաստորադասության, հավասարակշռության սկզբունքները:

Տարբեր գործառական ոճերում առաջին պլան են մղվում տարբեր ոճական հատկանիշները: Գործարարական–պաշտոնական ոճում դրանք ճշգրտություն ու պաշտոնականությունն են:

Ատենախոսության երրորդ՝ «**Գործարարական կողմնորոշման անգլերենի ուսուցման մեթոդական համակարգը և գիտափորձարարական հիմնավորումը**», խորագիրը կողո գլուխը բաղկացած է երեք ենթազխից:

Առաջին ենթազխում՝ «**Տնտեսագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության և ուսուցման հիմնախնդիրը գործարարական անգլերենի դասընթացում**», ներկայացվում են տնտեսագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության սկզբունքները, տեսակները և նպատակները:

Ըստ տեքստի ընտրության սկզբունքների առաջնային ենք համարել գործաբանական սկզբունքը: Դրանից հետևում է հաջորդ սկզբունքը, ըստ որի գործաբանական տեքստերը պետք է լինեն բնագրային: Երրորդ սկզբունքը բխում է առաջին երկու սկզբունքներից: Տեքստը դիտարկվում է իր լայն իմաստով՝ որպես շարունակաբար զարգացող մակրոտեքստ: Գործաբանական իրազեկության զարգացման տեսանկյունից կարևորվում են բնագրային տեքստերը, որոնք բաժանվում են հետևյալ տեսակների. դիդակտիկական, կիսաբնագրային, կվազիբնագրային, բնագրային:

Կարևորվում են նեղ մասնագիտական, տնտեսագիտական, գովազդային, մշակութային և նախադեպային տեքստերը:

Գովազդային տեքստերին հատուկ են մատչելիությունը, արտահայտչականությունը, հակիրճությունը, յուրօրինակությունը: Տեքստի հատուկ մանրաբաժանման օգնությամբ առանձնացված նախադասություններն առավել հաճախ են հանդիպում գովազդային հաղորդագրություններում: Գովազդային տեքստերում հանդիպում են և՛ խոսքային, և՛ ոչ խոսքային ենթատեքստեր, որոնք ապահովվում են ոճական տարբեր հնարներով: